ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՑՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ. meo@ypc.am

ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի փորձագիտական եզրակացությունը

Ընդդեմ «Շանթ» հեռուստաընկերության «Հորիզոն» լրատվականի եթերում հեռարձակված հեռուստանյութերի շարքի՝ «Քանկոր» բժշկական կենտրոնի տնօրեն Շահեն Խաչատրյանի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Արամ Աբրահամյան
Գեղամ Բաղդասարյան
Լևոն Բարսեղյան
Մեսրոպ Հարությունյան
Արա Ղազարյան
Գեղամ Մանուկյան
Աշոտ Մելիքյան
Էմանուիլ Մկրտչյան
Մեսրոպ Մովսեսյան
Գնել Նալբանդյան
Բորիս Նավասարդյան
Նունե Սարգսյան
Օլգա Սաֆարյան
Գեղամ Վարդանյան

2012թ.-ի հոկտեմբերի 4-ին օնլայն կարգով Դիտորդ մարմնին էր դիմել «Քանկոր» բժշկական կենտրոնի տնօրեն Շահեն Խաչատրյանը, «Շանթ» հեռուստաընկերության «Հորիզոն» լրատվականի հոկտեմբերի 3-ի եւ 4-ի ինչպես նաեւ հոկտեմբերի 7-ի «Կիրակնօրյա Հորիզոն» հաղորդման եթերում ցուցադրված ռեպորտաժների վերաբերյալ փորձագիտական եզրակացություն ստանալու կապակցությամբ: Ռեպորտաժները պատմում էին «Քանկոր» ԲԿ տեղափոխված եւ հետագայում մահացած հիվանդի, ինչպես նաեւ վերջինիս բարեկամների եւ բուժկենտրոնի միջեւ հակասությունների մասին: Մասնավորապես, իր դիմումում Շահեն Խաչատրյանը նշում էր, որ ռեպորտաժում «իրողությունը ներկայացվել է խեղաթյուրված եւ սուտ փաստերով» եւ «Շանթ» հեռուստաընկերությունը վերոնշյալ կոնֆլիկտի երկրորդ կողմին՝ «Քանկոր» ԲԿ-ին բավարար հնարավորություն չի ընձեռել կարծիքը ներկայացնելու համար, ուստի եւ լուսաբանումը եղել է միակողմանի, վիրավորել եւ զրպարտել է բուժկենտրոնի տնօրենին:

Հոկտեմբերի 9-ին Դիտորդ մարմինն իր հերթական նիստին քննարկեց վերոնշյալ բողոքը եւ ուղղորդվելով իր աշխատակարգի 5.1 հոդվածով, ըստ որի՝ «ԴՄ-ը Ինքնակարգավորման նախաձեռնության անդամների կողմից կամ սույն աշխատակարգով նախատեսված դեպքերում՝ ոչ անդամների կողմից Վարքականոնի խախտման վերաբերյալ բողոքների քննության հիմքով կայացնում է կարծիք-եզրակացություն», եկավ հետեւյալ եզրահանգմանը.

1. Հաշվի առնելով, որ բոլոր երեք լրատվանյութերում ներկայացվել

են փաստական տվյալներ՝ այլ ոչ թե անձին գնահատող դատողություններ, ապա իրավական առումով դրանք վիրավորանք չեն կարող պարունակել: Ինչ վերաբերում է զրպարտանքի մասին բողոքարկողի պնդմանը, ապա այն կարող է հիմնավորված համարվել միայն այն դեպքում, եթե ապացուցվի, որ շարադրված փաստերը չեն համապատասխանում իրականությանը, ինչպես նաեւ դրանցով արատավորվում է անձի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը: Սակայն բուն ռեպորտաժներից ստացված տպավորությունն այնպիսին է, որ հեռուստաընկերությունը ոչ թե ակնհայտորեն կեղծ փաստեր է ներկայացնում, այլ տալիս է փաստերի հակասական մեկնաբանություններ:

2. Միեւնույն ժամանակ, հոկտեմբերի 3-ին «Հորիզոն» լրատվականի եթերում ցուցադրված ռեպորտաժում ներկայացվում է միայն տուժած կողմի տեսակետը, եւ միջոցներ չեն ձեռնարկվել երկրորդ կողմից, այն է՝ բուժկենտրոնից, ներկայացված փաստերի իսկության վերաբերյալ մեկնաբանություն ստանալու համար: Այս առումով, Դիտորդ մարմինը գտնում է, որ վերոնշյալ հեռուստանյութում «Շանթ» հեռուստաընկերության լուսաբանումը եղել է միակողմանի: ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոնի 1.1. եւ 1.3 հոդվածները համապատասխանաբար ենթադրում են՝ «Մինչեւ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը…» եւ «վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի վրա»:

3. Թեեւ հետագա հեռուստանյութերում ներկայացվում են հատվածներ Շահեն Խաչատրյանի մամլո ասուլիսից, այնուամենայնիվ կողմերին հավասար հնարավորություն չի տրամադրվում վեճի լուսաբանման ամբողջ ընթացքում: Դրա մասին վկայում է այն հանգամանքը, որ վեճի կողմերից մեկին՝ մահացած հիվանդի տղային, հեռուստաընկերությունը հնարավորություն է տվել իր կարծիքն ու տեսակետները ներկայացնել ուղիղ խոսքով եւ առանց խմբագրական միջամտության, այն է՝ «Հորիզոն» լրատվականի եթերում հարցազրույց տալով, իսկ Շահեն Խաչատրյանի դեպքում ցուցադրվել են համատեքստից առանձնացած հատվածներ՝ նրա մամլո ասուլիսից: ԶԼՄ-ների ներկայացուցիչների վարքականոնի 6.1 եւ 6.4 կետերը համապատասխանաբար սահմանում են. «աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից» եւ «քաջալերել հանրությանը՝ արտահայտելու ԶԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության»:

4. Բողոքի առարկա «Շանթի» ռեպորտաժներում ներկայացված վեճը անմիջապես կապված է հեռուստաընկերության լրագրող Մանվել Քեշիշյանի հետ, քանզի մահացած հիվանդը լրագրողի հայրն է: Այս առումով Դիտորդ մարմինը գտնում է, որ այդպիսի լուսաբանումը պարունակում է շահերի բախման, լրատվամիջոցի կողմից իր դիրքի չարաշահման վտանգ, եւ բարձրացված խնդրի կարեւորությունը հանրության կողմից կարող է ոչ համարժեք ընկալվել: Ցանկալի կլիներ, որ Մանվել Քեշիշյանը եւ հեռուստաընկերությունը վեճին անդրադառնալու այլ տարբերակներ գտնեին, օրինակ, դիմելով չեզոք լրատվամիջոցին: Վերջին հանգամանքից ելնելով լուսաբանման ուղղվածությունը, մասնավորապես, վեճը առողջապահության ոլորտում առկա բացասական երեւույթների վերաբերյալ ՀՀ նախագահի քննադատության համատեքստում ներկայացնելը, կարող է տպավորություն ստեղծել, որ հեռուստաընկերությունը արհեստականորեն բարձրացնում է բուժկենտրոնի մասին բացասական կարծիք ձեւավորելու հնարավորությունը: Դրանով իսկ վնաս է հասցվում խնդրի անաչառ ընկալմանը: Հոկտեմբերի 9-ին կայացած ԴՄ-ի նիստից հետո, ԴՄ-ը հետամուտ է եղել վեճի հետ կապված զարգացումներին, անդրադարձել է հոկտեմբերի 9-ի «Շանթի» լրատվանյութին, որտեղ լուսաբանելով Շահեն Խաչատրյանին պաշտպանող բժիշկների մամուլի ասուլիսը, հեռուստաընկերությունը հայտարարել է, որ՝ «…Շահեն Խաչատրյանի վերաբերյալ բողոքի բազմաթիվ նամակներ ու զանգեր է ստանում եւ մեր հաջորդ բոլոր անդրադարձներին մենք կներկայացնենք դրանք ըստ հերթականության եւ ամենայն մանրամասնությամբ»: Այդպիսի հայտարարությամբ լրատվամիջոցը խորացնում է այն տպավորությունը, որ ինքը չի սահմանափակվում իրադարձությունները անաչառ լուսաբանողի դերով:

Դիտորդ մարմինը վերահաստատում է իր դիրքորոշումը, որ տեղեկատվական վեճերով քաղաքացիների դատարան դիմելը պետք է հանդիսանա պաշտպանության ծայրահեղ միջոց, որին խորհուրդ է տրվում դիմել միայն այն բանից հետո, երբ սպառվել են այդպիսի վեճերի լուծման արտադատական բոլոր հնարավոր միջոցները՝ եւ առաջին հերթին ԶԼՄ-ի հետ անմիջականորեն հաշտության հասնելը՝ հերքման, պատասխանի կամ նրա կողմից ներողության հրապարակման եղանակով: Ուստի, ԴՄ-ը կոչ է անում Շահեն Խաչատրյանին ձեռնպահ մնալ դատարան հայց նեկայացնելուց, իսկ «Շանթ» հեռուստաընկերությանը՝ վեճը լուծելու համար եթերում հրապարակել սույն եզրակացությունը կամ Շահեն Խաչատրյանին տրամադրել օրենքով նախատեսված ձեւով պատասխանի իրավունք՝ վերջինը թողնելով առանց մեկնաբանության:

Ընդունվել է Զանգվածային լրատվության էթիկայի դիտորդ մարմնի 2012 թ. հոկտեմբերի 9-ի նիստում, ԴՄ հետեւյալ կազմով՝

Գեղամ Մանուկյան, «Երկիր մեդիա» հեռուստաընկերության տեղեկատվական եւ հասարակական-քաղաքական հաղորդումների տնօրեն
Օլգա Սաֆարյան, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի իրավաբան
Մեսրոպ Մովսեսյան, «A1+» հեռուստաընկերության տնօրեն
Գեղամ Վարդանյան, www.media.am-ի պրոդյուսեր
Աշոտ Մելիքյան, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Բորիս Նավասարդյան, Երեւանի մամուլի ակումբի նախագահ
Էմանուիլ Մկրտչյան, «Արմինֆո» լրատվական գործակալության տնօրեն:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 48-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնով, որն ընդունվել է ինքնակարգավորման մարմնի 2007 թվականի մարտի 10-ի ժողովին: